ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան «05» հունիսի 2019թ.

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, ի դեմս Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի այսուհետ՝ Մասնաճյուղ, ի դեմս գործադիր տնօրեն Պավել Սաֆարյանի, ով գործում է լիազորագրի համաձայն, մի կողմից, և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ Կազմակերպություն (Հաստատություն, Ձեռնարկություն), ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Մասնաճյուղն ուղարկում, իսկ Կազմակերպությունն ընդունում է Մասնաճյուղի՝ բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերով սովորող ուսանողներին ուսումնական (արտադրական) պրակտիկա անցնելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.1.1. անցկացնել Մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերով սովորող ուսանողների պրակտիկան՝ համաձայն իրեն ներկայացրած ուսանողների կազմի և պրակտիկայի անցկացման ժամկետների, համապատասխան պրակտիկայի առարկայական նկարագրի և ծրագրի,

2.1.2. ղեկավարել ուսանողների պրակտիկան՝ նշանակված լիազոր անձանց միջոցով, իրականացնել պրակտիկայի մասնակից ուսանողների հաշվառում, աշխատանքի ընթացիկ հսկողություն,

2.1.3. պրակտիկան անցկացնող լիազոր ղեկավարների միջոցով վերահսկել ուսանողների թղթապանակների և օրագրերի ճիշտ լրացումը, և վերջում համապատասխան բնութագրերի ներկայացումը,

2.1.4. ստեղծել անհրաժեշտ պայմաններ ուսանողների կողմից պրակտիկայի ծրագրի կատարման համար,

2.1.5. վերահսկել ուսանողների կողմից ներքին կարգապահության և անվտանգության կանոնների պահպանումը,

2.1.6. ուսանողներին հնարավորություն ընձեռնել ծանոթանալ ստորաբաժանումների աշխատանքներին և մասնակցել մասնագիտական գործունեությանը՝ կատարելով կոնկրետ աշխատանքային պարտականություններ աշխատավայրերում:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Մասնաճյուղին տեղեկացնել պրակտիկա անցնող ուսանողների անհարգելի բացակայությունների մասին և դրանց կրկնվելու դեպքում դադարեցնել պրակտիկան,

2.2.2. հրաժարվել պրակտիկան կազմակերպելուց, եթե Մասնաճյուղը չի կատարում սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, ներկայացված ծրագրով օբյեկտիվորեն [illegible] մասին ծրագիրը ներկայացնելուց հետո 3 օրվա ժամկետում

2.3. Մասնաճյուղը պարտավոր է՝

2.3.1. պրակտիկայի համակարգման, ղեկավարման, խորհրդատվության և մեթոդական ապահովման համար նշանակել պատասխանատու Մասնաճյուղի կազմից,
2.3.2. պրակտիկան սկսվելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ Կազմակերպությանը տրամադրել պրակտիկայի ծրագիրը, տեղեկացնել պրակտիկայի ժամանակահատվածի մասին, տրամադրել պրակտիկա անցնող ուսանողների ցուցակները,
2.3.3. ուսանողներին ուղարկել Կազմակերպություն համապատասխան ժամկետներում, որոնք նախատեսված են պրակտիկան անցնելու համար, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ պրակտիկայի ծրագրի արդյունավետությունը ապահովման համար:
2.3.4 Պահպանել պայմանագրի գործողության ընթացքում ուղղակիորեն և/կամ անուղղակիորեն ստացված առևտրային և/կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկության գաղտնիությունը: Ընդ որում նշված պարտավորությունը չի դադարում նաև սույն պայմանագրի գործողության դադարման դեպքում:

2.4. Մասնաճյուղն իրավունք ունի՝

2.4.1. հետևելու պրակտիկայի անցկացմանը իր ծրագրերի համապատասխան,
2.4.2. պարբերաբար վերահսկելու պրակտիկայի ընթացքը և դրանում ընդգրկված ուսանողների հաճախումները և գործունեությունը,
2.4.3. միակողմանի հրաժարվելու պայմանագրից, եթե Կազմակերպությունը չի կատարում սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները:

3. Պայմանագրի գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծումը
3.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2024թ. օգոստոսի 1-ը:
3.2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ մյուս կողմին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով:
4. Վեճերի լուծման կարգը
4.1. Սույն պայմանագրով Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Մասնաճյուղ Կազմակերպություն Լոմոնոսովի անվան Մոսկվայի Պետական Համալսարանի Երևանի մասնաճյուղ ՀՀ, ք. Երևան, Այգեստան 8 ՀՎՀՀ 02636517 «Ինեկոբանկ» ՓԲԸ	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ ք. Երևան, Արամի փողոց 82-84 շենք, 87,89,99,100 տարածքներ ՀՎՀՀ՝ 02520007 Հեռ.՝ +37410318888 Էլ. հասցե: [illegible]

Գործադիր տնօրեն Պ. Սաֆարյան (ստորագրություն և կնիք)	Գլխավոր գործադիր տնօրեն Հ. Անդրեասյան (ստորագրություն և կնիք)